891.99
V-25

891.99
Մ-25
1007
32161
6 NOV 20

ՋԱՐՄԱՆԱԼԻ ՏԵՍԻԼ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐԿԸՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՑ

ՑՈՒՆԻՍԻ 6-ԻՆ

Գրաբարից կարագրեց

Գրիգոր աւագ քահանայ Մանդակունի

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ԼԻՊՕԽՆ» Մուզեյսկի պկր. № 8
1916

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳՐԱԿՑՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿ-ՍՍՌ
Գոս. Գրքի. Գրադարան
Մ. Գ. Մաշինեան

24 JUN 2013

41826

Աստուածն ասում է.

«Ես բարկացել էի իմ ժողովրդի վերայ՝ որովհետև պղծեցին իմ ժառանգութիւնը. ես նորանց քո ձեռքը մատնեցի և դու նորանց վերայ չարիք ողորմութիւն։ Եսայի, ԽԶ. 6»։

«Եւ դորա համար՝ ով թագաւոր, թող իմ խրատը քեզ հաճելի երևի. քո մեղքը ողորմութեամբ բաւիր և քո անօրէնութիւնը չքաւորների վերայ գթալով. որ Աստուած թերևս երկայնամիտ լինի քո յանցանքի վերայ։ Դանիէլ Դ. 24։»

ԶԱՐՄԱՆԱԼԻ ՏԵՍԻԼ

Ներկայ 1916 թուի Յունիսի 6-ի առաւօտեան 10րդ ժամուն բաղձանաց համաձայն «Մշակ», «Հորիզոն» և «Հովիտ» թերթերի համարները շար ի շար դասաւորեցի սեղանիս վերայ, և սկսեցի կարդալ Տաճկահայերի կոտորածների յօդուածները. և յետոյ երբոր ձեռս ծնոտիս դրած դառն մտածողութեամբ նայում էի դէպի հարաւ՝ յանկարծ ինձ երևութացաւ մի զարմանալի տեսիլ։

Որպէս թէ, ես գտնվում էի Պոլիս Օսմանեան մի հրաշալի պալատում, որտեղ մի ընդարձակ դահլիճում ականակուռ ոսկեղէն գահի վերայ բազմած էր Սուլթան Մահմէտ Ե-րդը. նորա դիմաց դէպի ձախ կողմը նստած էին երկու երիտասարդ բարձրաստիճան պաշտօնեաներ. նորանցից մէկը Սուլթանին ասաց «Մեծափառ Սուլթան. Հայերին արդէն ջնջեցինք՝ այդ ոչինչ, պէտք է Ասորիներին էլ ջնջենք, և միանգամայն բոլոր Քրիստոնեաներին պէտք է աւելենք, սրբենք և մաքրենք մեր խնկաբոյր աշխարհիցը։»

«Սուլթանն ասաց «Չէ, այդ չէ կարելի, որովհետև այժմ դորա ժամանակը չէ. թողէք դեռ Հայերի ջնջելու պատասխանատուութիւնից դուրս գանք՝ յետոյ միւս Քրիստոնեաների բնաջնջելու պատճառներ կստեղծենք և ապա կսկսենք այդ մնացած հունձն էլ յաջող առաջ տանել. վերջապէս, այն բանը՝ որ մեր ձեռքումն է, այսօր չլինի, թող վաղը լինի»։

Երկրորդ պաշտօնեան վրայ բերեց «Մեծափառ Սուլթան, պէտք չէ ներկայ յարմար ժամանակը ձեռքից բաց թողնենք, քանի որ ջնջելն սկսել ենք՝ պէտք է լրիւ վերջին կէտն էլ հասցնենք. և մեր սիրելի Տաճկաստանումը պէտք է չը թողնենք որևէ Քրիստոնեայ ազգի կենդանի շունչ։ Մեծ տէրութիւնների ուժերն

արդէն սպառել են, և այսուհետև ով պէտք է յանդգնի մեզ պատասխանատուութեան ենթարկել, այդ կողմից միամիտ կացէք, թէ շուտ և թէ ուշ, Կովկասն էլ մերն է լինելու»։

Եւ ահա այս միջոցումը դահլճի դռներն բացուեցան, ներս մտաւ մի պատկառելի ծերունի հոգևորական. և նոյն ժամուն այն երկու աստիճանաւորներն դուրս գնացին, իսկ ծերունին ողջունելով Սուլթանին՝ նստեց նորա աջ կողմի գահոյքի վերայ։ Ծերունու երեսը թէև տխուր էր, սակայն նորա դէմքի վերայ լուսատեսիլ արեգակնային ճառագայթներ էին փայլում, որով յայտնում էին նորա ոգւոյ վեհութիւնը, արդարասիրութիւնը և խղճի մաքրութիւնը, նա՝ կարծես թէ, մարդկային կերպարանք առած հրեշտակ լինէր. նրանք մի քանի բոպէ մեռելային լռութեան մէջ ընկղմած՝ նայում էին դէպի «խաս-բաղջան» յանկարծ երկու Ագռաւներ եկան և նստեցին նորանց դիմացի ծառի վերայ և դէպի Սուլթանը սկսեցին շարունակ ղա. ղա. ձայնել. Սուլթանը զարմացմամբ սկսեց այն ծերունուն ասել. «Հայր Շեյխուլիսլամ, երանի կը լինէր, մարդ իմանար, թէ ինչ է սորանց ցաւն՝ որ դէպի ինձ շարունակ ղա. ղա. ղա. են ձայնում»։ Շեյխուլիսլամը պատասխանեց «Օսմանեան մեծ ազգի Վեհափառ Սուլթան, այդ Ագռաւներից մէկը իւր աղջիկ ձագը տուել է կին՝ միւսի տղայ ձագին, հետն էլ քո տէրութեան միջից օժիտ՝ 40 աւերակ քաղաք. իսկ տղայի ծնող Ագռաւը չի համաձայնում, այլ օժիտ 40 աւերակ քաղաքի փոխարէն ութսուն է պահանջում, ուստի եկել և աղաչում են լսել քո արդար վճիռը».

Սուլթանը մելամաղձոտուած ասաց «Եթէ բանն այդպէս է, ես վճռում եմ, որ տղայի մայր Ագռաւը օժիտ 40 աւերակ քաղաքով բաւականանայ»։

Ագռաւները Սուլթանի վճիռը լսելուն պէս՝ գլուխները խոնարհեցրին, թռան և անյայտացան։

Սուլթանը ուղղուելով դէպի Շեյխուլիսլամը՝ ասաց «Մի՞թէ իմ պետութեան մէջ 40 աւերակ քաղաք կայ»։

Շեյխուլիսլամը պատասխանեց «Մեծափառ Սուլթան. երբոր այս մեծածաւալ և ընդարձակ մեծ պետութեան Սուլթանը դու ես, և քո խորհրդականներն այն երիտասարդ փաշաներն են՝ ուղիղն ասում եմ, կարճ ժամանակից յետոյ, չէք ունենալ քո տէրութեան մէջ և ոչ մի շէն քաղաք»։

«Յիշում էք, որ 1909 թուին Մայիսի 2ին երբոր Կիլիկեան Հայոց կրած ջարդերի առիթով Թիւրքահայերի մի պատգամաւորութիւն ներկայացաւ քեզ, որքան յիշում եմ նորանց խնդրքին հետևեալը պատասխանեցիր. «Շատ իրաւացի են ձեր խօսքերը, ես անմիջապէս հէնց վաղն առաւօտ պիտի կանչեմ մեծ վէզիրին, որ նկատի առնէ այս խնդիրը, որպէսզի անհրաժեշտ միջոցները ձեռք առնեն այդ առիթով. ինչ են նշանակում այսպիսի ջարդեր, թալան, բռնաբարում։ Ինձ համար բնաւ ցանկալի չէր, որ իմ գահակալութեան օրով, այսպիսի տգեղ երևոյթներ տեղի ունենան։ Իմ հպատակների մի կաթիլ արիւնն՝ որ թափուի՝ իմ սրտից կը հոսի։ Զի՞ որ ամբողջ երկիրը մի մարմնի նման է, մի անդամի ցաւը, իհարկէ ամբողջ մարմինը կզգայ։ Ես իմ հպատակներիս նկատում եմ համահաւասար իրաւունքների տէր։ Խիստ ցաւում եմ և միանգամայն զարմանում կատարուած այդ դէպքերի վերայ։ Իմ հօր օրով այսպիսի դէպքերի մասին բնաւ չէինք լսում։ Մեր գերդաստանի ճարտարապետները, Հայեր էին. ես ճանաչում էի նորանց։ Նորանց ձեռքի տակ աշխատաւորների էլ մեծ մասը դարձեալ Հայեր էին։ Վարպետներ և այլ բարձրաստիճան և արհեստապետներ նոյնպէս Հայեր էին։ Հայերի, Իսլամների մէջ կատարեալ սէր և համերաշխութիւն կար այն ժամանակ։ Մի հայրենիքի զաւակներ էին բոլորն էլ։ Մենք

խորութիւն չենք դնում նորանց մէջ։ Բայց սա վերջին երեսուն տարուայ ընթացքում ինչ է պատահել, որ այսչափ փոխուել է ամեն ինչ՝ այդ, ուղիղն ասած, չեմ կարող ըմբռնել։ Ցոյս ունիմ որ այսուհետև չարիքին դարման կը հոդացուի։ Աղանայի կոտորածների հեղինակներն անշուշտ պիտի պատժուին. և կողոպտուած իրեղէնները յետ պիտի դարձուին իրանց տէրերին։ Ի՞նչ է սահմանադրութիւնը ինչ է շարիաթը, դրանք միթէ ժողովրդի բարեկեցութեան ու հաւասարութեան համար չեն։ Ցանկանում եմ, որ իմ օրով այդ պէս լինի։ Ինչպէս որ բարի հայր իր որդուցը բաղդաւորութիւնն է ցանկանում։ Ես էլ կամենում եմ, որ իմ գահակալութեան օրով ամբողջ երկիրը երջանիկ զգայ իրան։ Վստահ եղէք, որ ուշադրութեան պիտի առնուի ձեր խնդիրը։»

Ահա այս սուլթանական ազնիւ խօսքերն ասելուցդ յետոյ է, որ քո արձակած հրովարտակովը, ամբողջ Թուրքահայաստանը ծովացրիր Հայերի անմեղ արիւններով, մերկացրիր նորանց իրանց շքեղ զարդերից, կողոպտեցիր նորանց տները, կրպակները և դիզած թանկագին հարստութիւնները, զրկեցիր նորանց՝ իրանց կեանքի քաղցրութիւնից. հարիւր հազարների՝ հարիւրական իրար հետ կապկըպելով քարաժայռերից անաղնդախոր ձորերն ի վայր գլորեցիր. և ուրիշ ուրիշ շատ հարիւր հազարների իրար կապոտելով դրիր նաւերի մէջ ու տարար ծովերի խորը լցրեցիր, հազարաւոր ծծկեր երեխաներին տոպրակների մէջը լցնելով ծովերի խորքերումը թաղեցիր, հարիւր հազարների ոչխարի պէս մորթեցիր, հազարաւոր քաջառողջ տղաների՝ իրանց հայրերի առաջ սպանեցիր, հազարաւոր հայրեր՝ իրանց տղաների առաջ սրերիդ զոհ տուիր, հազարաւոր անբիծ աղջիկներ՝ իրանց ծնողների առաջ անպատուեցիր, հազարաւոր ամօթխած հարսների՝ իրանց ամուսինների առաջ խայտառակեցիր, հազարաւոր գեղեցկուհիների հասցրիր յուսահատութեան այն աստիճանին՝ որ իրանք իրանց վարար գետերի ջրերին կեր ու կուլ տուին. լաւ համարեցան ջրահեղձ լինել՝ քան քո բորենի զինուորների պիղծ քաղցերին յագեցուն. հազարաւոր հրաշալի չքնաղագեղներին՝ բռնի հարեմները լցրեցիր, և քանի՞ քանի՞ հազարների և հարիւր հազարների խայտառակութիւններով սրիկաների տներում ցիր ու ցան արիր. և կէս միլիոնից աւելի դժբաղդների՝ անօրինակ տանջանքներով դէպի հեռաւոր դժոխավայր անապատները գերի վարեցիր, և այսպէս մի ամբողջ աշխարհ իւր բնիկ Հայ ժողովրդովը բնաջինջ արիր. մինչև անգամ չը խնայեցիր Աստուծոյ տաճար՝ ոչ եկեղեցիներին և ոչ եկեղեցականների զանազան աստիճանի պատկառելի պաշտօնեաներին, այլ բոլորին դաժան տանջանքներով սրերի բերան տուիր, և ահա այսպէս աւերակ գիւղերի և քաղաքների թիւն աւելացնելով Ազգաւների բնակութիւնները շատացրիր, որով բարեպաշտ Իսլամների երեսներին սև քօղ ծածկեցիր, որոնք ամաչում են կանգնիլ մի Եւրոպացու առաջ և ասել, թէ ես պատկանում եմ այն բարբարոս ցեղին՝ որոնք աշխարհիս մէջ մի ամբողջ ժողովուրդ զուր իզուր տեղը բնաջինջ արին։

Ո՜վ մեծափառ Սուլթան, դու չը վախեցար Ալլահից, չը վախեցար մեր մեծ մարգարէ Մուհամմէտից, որ Ղուրանի 5-րդ սուրէթի 85 այէումն ասում է. «Հաւատացեալներին ամենամօտիկ սիրողները նորանք են՝ որ ասում են. մենք քրիստոնեայ ենք» ուրեմն դու ի՞նչպէս վստահացար միլիոնից աւելի Հայ քրիստոնեաների կարմիր արիւններովը ներկել Հայաստանի քաղաքներն ու աւանները. և նորանց դիակներով լցնել դաշտերն ու ձորերը։ Ղուռանի Դ. սուրէթի 61 այէումն ասում է. «Ձեզ յանձնուած բանները՝ իրանց տէրերին յետ դարձրէք»։ Այլև հրամայում է «Ընդեղացնել արդար, ազնիւ և խաղաղասէր մարդկանց՝ ինչ

հաւատ էլ որ դաւանում լինին նորանք, այլ պաշտպանել նորանց անօրէնների կամայականութեան և բռնութեանց դէմ և պահպանել նորանց՝ իբր Ալլահի պահ տուած մարդկանց»։ Մեծափառ Սուլթան, եթէ ծառաներիցդ մէկին՝ չեմ ասում տասը կենդանի մարդ, այլ 10ը ոչխար յանձնէիր պահելու, իսկ նա մի քանի օրից յետոյ տասսին էլ՝ որն սպանած և որը խեղդած քեզ յետ դարձներ՝ նորան մի թէ չէիր պատժել, իսկ այժմ, Դու՝ որ Ալլահի քեզ յանձնածներին, որ այդպէս տարօրինակ խայտառակութիւններով յետ իրան Ալլահին դարձրիր, Դու այժմ քո երիտասարդ խորհրդականներովը նորա հրաբորբոք բարկութեան առաջ ինչ էք պատասխանելու, դուք չէք կարող ոչ մի կերպ Ձեզ արդարացնել, եթէ ասէք, Հայերը մեզ հաւատարիմ չեն, մեր երկրում մեր դէմ զինվում են, դորանք փաստեր չեն, դորանք ստայօդ պատճառաբանութիւններ են. եթէ Հայերից մի քանիսը ապստամբութեան մի որև է նշան ցոյց տուած լինէին՝ դորա պատճառն էլ Ձեզանից պէտք է առաջ եկած լինէր, եթէ Դուք Ձեր խոստման համաձայն նորանց լաւ պահած լինէիք, նորանք երբէք Ձեզանից չէին զզուիլ, չէին ուզել Ձեզ անհաւատարիմ դտնուիլ, Ձեզանից հեռանալ և Ձեր ձեռքիցն ազատուիլ։ Հայերն ինչու Ձեր պապերի օրերում հաւատարիմ էին, իսկ այժմ հակառակն էք պընդում. Հայերը՝ Ֆաթի—Մէհմէտ սուլթանի օրերից մինչև Սուլթան Ապդիւլ Մէջիդ Ազիզը եղել են Օսմանեան Սուլթանների ամենահաւատարիմ հպատակները։

Հայերիցն են եղել Սուլթանների խորհրդականները, բժիշկները, ճարտարապետները, վառոդապետները, դանձապետները, վաճառապետները. Հայերի ձեռքն է եղել այլև պատասխանատու պաշտօնների մեծագոյն մասը։ Ե՞րբ է տեսնուել մի զեղծմունք և կամ որ և է կասկած Հայերի վերայ։

Յիշեցէք այլև և այն՝ որ Սուլթան Մուրատի օրովը՝ եթէ Յարութիւն Ամիրայ Պեզճեանի կերպ կերպ հաւատարիմ ծառայութիւնները չը լինէին՝ այն օրուանից Պոլիսը դարձած կը լինէր Ռուսիոյ մեծ Դահակալի կայսերանիստ մայրաքաղաքը։

Արդ, այժմ ինչ եղաւ, ինչու Սուլթան Համիտը և Դու, Քո խորհրդականներովն այդ շատ պիտանացու և հաւատարիմ ազգին միանգամայն աչքից ձգեցիք և անհաւանալի, դառն և ամօթալի տանջանքներով ու ջարդերով բնաջինջ արիք։

Ո՜վ մեծափառ Սուլթան, հաւատացէք, որ ինձ հետ դառն արտասուք թափելով ողբում են բոլոր հասկացող և բարեպաշտ Մուսուլմանները, որովհետև հաւատում են՝ որ Դուք Հայերին ինչ անօրինակ տանջանքներով՝ որ բնաջինջ արիք, նոյն օրինակ տանջանքներով բնաջնջումն պատրաստեցիք Օսմանեան փառապանծ ազգի որդւոցը համար, գլուխների փոխարէնը՝ գըլուխներ. աչքերի փոխարէնը՝ աչքեր. ատամների փոխարէնը՝ ատամներ, և այսպէս Քո գործած բոլոր տանջանքների փոխարէնը՝ տանջանքներ և բնաջնջումն, որովհետև Ալլահը արդարադատ է. որորհետև ով որ ինչ չափով ուրիշին չափէ՝ Ալլահն էլ նոյն չափովը նորան կը չափէ. Ալլահը չի թողնել մի աւազի չափ յանցանքը՝ առանց ուշադրութեան. ահա հէնց այս ցաւն է՝ որ իմ և բոլոր բարի Իսլամների սրտերը խոցոտած՝ մեզ ևս սուգի է նստեցրել։

Ո՜վ մեծափառ Սուլթան, հաստատ իմացիր, որ այս բոլոր անցքերը մանրամասնօրէն գրուելու են համաշխարհային պատմութեանց մէջ, յաւիտենական նախատինք Օսմանեան մեծաղօր ազգին. ուստի շտապիր այս մեծ նախատինքի փոխարէնը անել՝ Քո իսկ հրամանովը մարտիրոսացրած Հայոց ազգի մնացորդներին մի այնպիսի մեծ, ծանրագին և բոլորովին չտեսնուած ու չը լսուած բարութիւններով լի ու զեղուն շնորհ, որ

աշխարհի ազգերին զարմացնող պարծանք դրոշմէ Օսմանեան մեծ ազգի ճակատին։

Շէյխուլիսլամն այս ասելուց յետոյ՝ սկսեց ողբաձայն լալ, Սուլթանն էլ լացեց։ Եւ այս իսկ ժամուն տեսայ, որ ահա բոլոր բարի Մուսուլմանները լուսաւոր թեւեր առած ժողովուեցան Սուլթանի շուրջը և սկսեցին հառաչելով աղաղակել Ալլահ, Ալլահ, Ալլահ. Դու ով մեծափառ Սուլթան, շտապիր, շտապիր անել մի ծանրագին շնորհ. մեր ազգի ձեռքով մարտիրոսացած Հայ ազգի մնացորդներին և նորանց հարիւր հազարից աւելի ցիր ու ցան արած որբերին, որով կարողանաս սրբել այն զազրալի արատը՝ Քո պանծալի գահոյքիցը, և զզուելի նախատինքը մեր երեսիցը։

Տեսայ ճիշդ, հէնց այս բոպէին ներս մտաւ ամենայն Հայոց Գէորգ Ե-րդ սրբազնագոյն Վեհափառ Կաթուղիկոսը, վարդագոյն ճառագայթներով լուսավառուած՝ բայց տխուր դէմքով, պարթև հասակով, սպիտակ ու փառահեղ մօրուքով, սև քօղաւորուած գլխատով, նոյն ժամուն բոլորն ոտքի կանգնեցին, իսկ Սրբազնագոյն Վեհափառ Հայրապետը առաջ եկաւ, գլուխ խոնարհեց, ձեռն առաւ Սուլթանի, համբուրուեց Շէյխուլիսլամի հետ, ողջունեց բարի Մուսուլմաններին, և ապա կանգնելով Սուլթանի դիմացը սկսեց հեզեզալ և լալով ասել. «Ո՜վ մեծափառ Սուլթան, շրջեցի ամբողջ Հայ բնակչութիւնները, տեսայ բոլորը դատարկ, շրջեցի ամբողջ Տաճկահայաստանը՝ տեսայ վանքերս ու եկեղեցիներս դատարկուած, Հայ վաճառականները դատարկուած, արհեստանոցները՝ դատարկուած, գեղեցկաշէն տներից՝ որոնք քանդուած և որոնք այրուած, տեսայ բոլոր կողմերում այլանդակութիւն, դատարկութիւն, լռութիւն, և սև սուգի աղջամղջային խաւար։

Ո՜վ Սուլթան, ուր են իմ Պատրիարքները, Առաջնորդները և վարդապետները, ուր են իմ քահանաները և Աստուծոյ տաճարներումը փառաբանող երգեցիկ սարկաւագներն ու քաղցրանուագ տիրացուները. ուր են իմ ուսումնարանների ուսուցիչները և ուսանողները։

Ո՜վ Սուլթան, ուր են իմ որդիները, ուր են իմ Հայ զաւակները, ուր են իմ սիրելի Հայ ժողովուրդները, ուր են ուր։

Ո՜վ Սուլթան, իմ որդւոցը կորստեան համար՝ ես ում դիմեմ, ում հարցնեմ, ուր որոնեմ, ում անհանգստացնեմ, ում բողոքեմ ում, եթէ ոչ Քեզ՝ ով իմ ամենաբարձրեալ Աստուած՝ Քեզ եմ բողոքում ,Քեզ՝ բազկատարած ձեռքերով, արտասուալիր աչքերով Քեզ եմ դիմում, Քեզ եմ բողոքում, ով Գրիգորների և Ներսէսների Աստուած, ուր են իմ սիրելի Հայ զաւակները, ուր...

Այս դառն ողբաձայն բողոքի խոցոտող ձայնիցը Սուլթանը, Շէյխուլիսլամը և բարեպաշտ Իսլամները սկսեցին բոլորն էլ իմիասին բարձրաձայն լալ ու ողբալ, որից իմ սիրտն էլ սկսեց փղձկիլ և աչքերիցս յորդեցին արտասուքների աղբիւրներ, այսու ամենայնիւ շուտով արտասուքներս սրբելուց յետոյ՝ երբոր սկսեցի կրկին լարուած ուշադրութեամբ նայել՝ տեսիլն յանկարծ անյայտացաւ։

Համաշխարհային պատերազմը եւ Հայերի ջնջումն

Վիլհելմից, կայծ ելաւ, հրդեհեց, ողջ աշխարհ,
Երկիրը սարսափեց պաշարեց խոր խաւար,
Ծովերն եռացին գետերն յորդեցին,
Ազգերի արիւնով դաշտ ու ձոր ներկուեցին։
Մեծերից մեծագոյն չորս Պետերն աշխարհի,
Կանգնեցին պաշտպաններ գլորուած ազգերի,
Տարերքի ուժերը իրար հետ խառնեցին,
Վիլհելմի յոյսերը սև ու մութ դարձրին։
Վեր կացան տեղերից Թուրքերից վատերը,
Քանդեցին Հայերի գեղեցիկ շէնքերը,
Պէտքական մարդիկը մէջ տեղից վերցրին,
Գիշակեր գայլերին կրկէսներ բաց արին։
Հոյակապ ու շքեղ Աստուծոյ տաճարներ,
Զարաչար պղծելով արեցին ողջ աւեր,
Լի հարուստ կրպակներ, լի ու շէն Հայ տներ,
Սրբեցին ամբողջը դարձրին իրանց կեր։
Վարդապետ, քահանայ, ոչ մի տեղ չը թողին,
Բոլորին սոսկալի տանջանքով մեռցրին,
Հայերից շատերին խեղդամահ արեցին,
Շատերին զերթ ոչխար սրերով մորթեցին։
Հարսներից սիրունին մացրին հարէմներ,
Օրիորդ կոյսերին լափեցին զերթ գայլեր,
Մեծերին, փոքրերին բնաջինջ արեցին,
Մնացած Հայերին դէպ Նինուէ վարեցին։
Ռազմագէտ Նիկոլայ Փոխարքայն Կովկասի,
Շուտ հասաւ ռազմաբէմ օգնութեան զօրքերին,
Ներշնչեց բոլորին կեանքի շունչ և հոգի,
Որ յախուռն քաջութեամբ սև բերեն Քիւրդերին։
Անդրանիկն, ու Սեպուհ, և Դրօն ու Քեռին,
Հայերի քաջերից նոր խմբեր կազմեցին,
Ռուս հերոս, զօրքի հետ, դէպ յառաջ խաղացին,
Զարդեցին, փշրեցին ողջ Հայքին տիրեցին։

Կեցցէ՛ միշտ, Ինքնակալ մեր Կայսրը Ռուս ազգի,
Կեցցէ միշտ, մեր հզօր Փոխարքայն Կովկասի,
Կեցցեն միշտ մեր պաշտպան Ռուս զօրքը պանծալի,
Կեցցեն և, Հայ խումբը պարզերես ու արի։

Անդրանիկի խրախոյսը

Եկէք քաջեր զինավառուած,
Վազենք ի դաշտ պատերազմի,
Մեր մարդախանձ հրացան առած,
Կարկուտ թափենք որոտալի։

Թէ շուտ, թէ ուշ պէտք է մեռնինք,
Հապա քաջեր արիանանք,
Պատուով ապրինք փառքով մեռնինք,
Տաճկահայրն փրկիչ դառնանք։

Մեզ վիճակուեց վրէժ առնել,
Մեր դարաւոր բիրտ ոսոխից,
Ահա ժամ է պէտք է հեձել,
Անզուսպ Քիւրտին բոլոր կողմից։

Արդ, զարկեցէք կոտորեցէք,
Մի խնայէք մեծին փոքրին,
Զարդրդեցէք աւերեցէք,
Մի՛ զանց առնէք և ոչ մէկին։

Խնայելու ժամն անցել է,
Հայի պատուի վրէժն առնենք,
Վրէժ ի վրէժ, վրէժ լուծենք՝
Արիւնի դեմ յորդեցնենք.

Հաւատարիմ կենանք Աստծուն,
Հաւատարիմ Ռուսաց Կայսեր,
Այնուհետև Քիւրդի արիւն,
Անյապ լափենք մենք ամվեհեր։

Սուրը ձեռքին բռնող Քիւրդին,
Սուրը խլենք խլենք սիրտը,
Խաղաղ ապրող Թուրքին Քիւրտին,
Պատուով պահենք չը տանք ձեռը։

Հայի անուան պատիւ բերող,
Ազնուութեամբ առիւծանանք,
Վատին՝ պատիժ, լաւին օգնող,
Որով յաւէտ մենք պարծենանք,

Հապա ջնջենք Քիւրտ գայլերին,
Հերիք լափեն մեր ծով արիւն,
Յետոյ ուրախ դոռանք դոչենք,
Ցաճկահային ազատութիւն։

Հայ մանուկի աղօթքը

Դու ես իմ յոյս. ով իմ Աստուած
Մանկութեանս օրերում,
Սուրբ հաւատս հաստատ պահիր
Կեանքիս ամբողջ ընթացքում.

Դու ես իմ յոյս. ով իմ Յիսուս
Իմ պատանի հասակում.
Երջանկութեան փայլուն յոյսս
Անշեղ պահիր իմ հոգում։

Դու ես իմ յոյս ով իմ Փրկիչ
Ծերութեանս տարիքում,
Քաղցր տեսքիդ անոյշ սէրը
Անշէջ վառիր իմ սրտում։

Ո՞վ իմ Աստուած տուր ինձ շնորհ
Որ ուսումս աւարտեմ.
Հայի վերայ չար խորհողի
Սիրտը բարին հաստատեմ։

Աղճուկ ազգիս կարիքների
Ամեն մէկին աշխատեմ.
Խաղաղ կեանքի շունչ ու հոգի
Գլխիս դնովը հասցնեմ։

Յետոյ ով տէր պարզ երեսով
Մաքուր սրտով ծունկ չոքեմ.
Հոգուս խորքից յուզուած սրտով
Փառք քեզ Աստուած փառք գոչեմ։

«Հայր մեր»

Մեր Հայր, որ Դու երկնքումն ես,
Թուրքի վատից ազատիր մեզ,
Թող սուրբ լինի Քո վեհ Անուն,
Քրտի հոտից սրբիր մեր տուն։

Երնեկ գայ Քո արքայութիւն,
Որ տայ մեզ միշտ խաղաղութիւն,
Լինի քաղցր Քո սուրբ կամքը,
Որ զուր անցնի չարի ջանքը։

Ամէն օր էլ մեզ տուր մեր հաց
Խարդախներից մեզ պաշտպան կաց
Թող մեզ ոչ Տէր, մեր շատ պարտքեր,
Մենք միշտ թողինք շատի պարտքեր։

Մի տանիր մեզ փորձութեան մէջ,
Անզութ մարդկանց թակարթի մէջ,
Ժամ է փրկիր նենգ ազգերից,
Մեզ խաբելով ջնջողներից։

Որովհետև դու ես մեր Տէր,
Դու մեր պաշտպան մեր Յոյս և Սէր,
Ուստի մենք էլ Քեզ միշտ կօրհնենք,
Սրտի խորքից փառք կը ձօնենք։

Գրիգոր սուրբ քահանայ Մ անդակունի

ՀԱՅ. ՍՍՌ
Գր. Ա. Մասհանեանց
Ս. ՄԱՍՍԻՈՆՅԱՆԻ ՄՈՒԶԵՈՒՄ

ՀՀ Ազգային գրադարան
NL0348958

ԳՐԻԳՈՐ ԱԻԱԳ ՔԱՀ. ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒ

Աշխատասիրութիւնները

	Ռ.	Կ.
1. Խորհրդածութիւն դոկտոր Նելսըն Ամերիկացւոյ և յաւելուածներ (սպառ.)	2	—
2. Ս. Գրոց հին ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը լուսաբանութեամբ և աշխարհի անցքերով. էջ 915	2	50
3. Ոսկի բարեկամ Հայ ընտանեաց, երրորդ տպ. 70 պատկերներով, էջ 904 (սպառուած);	5	—
4. Կանոնագրութիւն Տփխիսի հայ քահանաների միաբանու. (քննադատելի) (սպառուած)	—	10
5. Դրախտի Մարգարիտներ. 1 պատկ. (սպառ.)	—	25
6. Դիւան Տփխիսի Հայոց եկեղեցիների	—	55
7. Զրուանքներ		20
8. Մաշտոց-Մեսրոպը Հայոց տառերի և տպագրութեան գիւտը և սկզբնաւորութիւնը մեր ազգի մէջ. (սպառուած)	—	10
9. Ոսկի-բարեկամ Դ. տպ. 334 պատկերներով, էջ 1414	5	—
10. Հանրամատչելի բժշկարան մարմնի վէրքերի և հիւանդութիւնների	1	—
11. Գրիգոր լուսաւորիչ	—	50
12. Զարմանալի տեսիլ	—	10

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊԵԿ

Հասցէն՝ Тифлисъ. Протоіерею Григорій Мандакуни.

41826